

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

*Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:*

*I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը, հնչյունափոխությանը և կետադրությանը վերաբերող 5 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:*

*II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:*

*III մասում առաջարկվում է գրել շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր: Շարադրել գրագետ, թույլ չտալ ուղղագրական, կետադրական, ոճական և շարադասական սխալներ:*

*Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.*

*ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),*

*բ) շարադրանքի որակ՝ 5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):*

*Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:*

*Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:*

# ՄԱՍ I

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Լրացնել բաց թողած տառերը և երկհնչյունները.**

Գմբեթար \_\_, դեղ \_\_ անիկ, այծ \_\_ ամ, գոտ \_\_ որել, որևից \_\_, վաղ \_\_ ըոք, ան \_\_ ական, ու \_\_ արկել, դ \_\_ զն-ինչ, հինավուր \_\_:

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները.**

Պատռել \_\_\_\_\_ Ոսկրախտ \_\_\_\_\_

Գունազարդ \_\_\_\_\_ Անդնդախոր \_\_\_\_\_

Դեղնաթույր \_\_\_\_\_ Դափնեվարդ \_\_\_\_\_

Մրջնաբույն \_\_\_\_\_ Մատենագիր \_\_\_\_\_

Արմտիք \_\_\_\_\_ Բարություն \_\_\_\_\_

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.**

երեսուն (քառասուն), հարյուր (քսան), գյուղե (գյուղ), քաղաքից (քաղաք), հարավ (արևելյան), ի (սրտե), սեփ (սև), երանգ (երանգ), երկու (երրորդ), առ (հավետ).

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Ընդգծել այն բաղադրյալ հասուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.**

Արշակ Երկրորդ, Խոսրով Թագավոր, Խաղաղ Օվկիանոս, Դոն Քիշոտ, Սևանա Լիճ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության Նախարարություն, Նոր Նորք, Հայաստանի Ժողովրդական Երգի-Պարի Պետական համույթ, Մեծ Մասիս, Հանս Քրիստիան Անդերսեն, Փոքր Հայք, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ, Գարեգին Նժդեհ, Մաշտոցի Պողոտա, Նոր Գետիկավանք:

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Կետադրել.**

Գարունը հիրավի իր տարերքի մեջ էր:

Աղստը Դիլիջանի վարար գետերից մեկը ըմբոստացել էր և կիրճը թնդում էր նրա գոռում-գոյունից: Կիրճի վերևում միահյուսվում էին ծառերի խիտ ճյուղերը ստեղծելով բնական ամպհովանի: Երբ ջրերը վարարում էին դաշտում տեղ-տեղ բնական ավազաններ էին գոյանում: Ներքևում արևի ճառագայթները կիզիչ շոգիացնող չորացնում էին հողի կավի գույն ունեցող մակերեսը:

## ՄԱՍ II

### Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Հին մատյանը մի ամբողջ աշխարհ է՝ երփներանգ գույներով, հնչյուններով, բուրմունքով լի: (2) Շրջում եք տաքացրած կաթի գույն ունեցող մազադաթի թերթերը և ասես մեկնում եք մի հեռավոր ճամփորդության: (3) Շրջում եք թերթերը, և այդ տրամադրությունը չի լքում ձեզ: (4) Յուրաքանչյուր գլուխ սկսվում է զարդագրերով, ճակատագարով, գույների բարդ ու բազմազան անցումներով, գծերի յուրօրինակ հյուսվածքներով, ձևերի արտասովոր բազմազանությամբ՝ ամփոփված էջի վերին մասում:

(5) Մանրանկարներն ամբողջ էջեր են կազմում, ծնվում են բնագրի մեջտեղում ու լուսանցքներում:

(6) Հին մատյանները երաժշտություն են:

(7) Ամեն մատյան իր մեղեդին ունի: (8) Սակայն ուշադիր լսելով ու նայելով՝ նկատում ես ընդհանուրը, ինչը միավորում է նրանց, և որը հավանաբար հայկական մատյանների անորսալի ազգային յուրահատկությունն է: (9) Դա մեղեդու մաքրությունն է, հստակությունը, հնչեղ գույների ուժը և դրա հետ մեկտեղ՝ նրբագեղությունն ու հարստությունը: (10) Մի զարմանալի կապ կա հին մատյանների երաժշտության և հայկական ժողովրդական մեղեդիների միջև՝ թախծալի ու ոգեշունչ, զուսպ կրքով և գեղեցկությամբ առինքնող: (11) Եթե գտնեինք դրանց գունային համապատասխանությունը, կստանայինք խորանների, մանրանկարների և լուսանցագարդերի ձայնաշարերը:

(12) Երաժշտության լեզվով թարգմանելով հին ձեռագրերի անկրկնելի կոլորիտը՝ տառերի սևությունը, գլխատառերի փայլփլուն ոսկին, լաջվարդը, փիրուզը և նկարի որդան կարմիրը, կծորան հայի սրտում ծնված լուսավոր ու ջինջ մեղեդիները:

(13) Մատենադարանում պահվում է տասներեք հազար հայկական հին ձեռագիր:

(14) Դրանցից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, իր անկրկնելի դիմագիծն ու քնքուշ մեղեդին:

*Ըստ Կ.Բակշիի*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. 4-րդ և 5-րդ նախադասություններից դուրս գրել հոդակապով 4 բարդ գոյական.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. 10-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածական.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Բնագրից դուրս գրել նշված անկախ դերբայների օրինակներ.

Հարակատար /2 օրինակ/ \_\_\_\_\_

Ենթակայական /1 օրինակ/ \_\_\_\_\_

Անորոշ /1 օրինակ/ \_\_\_\_\_

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. 4-րդ նախադասությունից դուրս գրել սեռական հոլովով գործածված 4 գոյական.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. 7-րդ նախադասությունից դուրս գրել 2 դերանուն և որոշել տեսակը.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. 12-րդ նախադասությունից դուրս գրել ՈՒ հոլովման պատկանող 2 գոյական.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. Որոշել 12-րդ նախադասության կծորան բայի եղանակը և ժամանակաձևը.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. 14-րդ նախադասությունից դուրս գրել ուղիղ խնդրի 2 օրինակ.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. 12-րդ նախադասությունից դուրս գրել ենթական և ստորոգյալը.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. 5-րդ նախադասությունից դուրս գրել տեղի պարագայի 2 օրինակ.

---

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. Նշել 13-րդ նախադասությունում գործածված թվականի տեսակը.

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. 8-րդ, 10-րդ և 11-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. 4-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս / վերջադաս/ դերբայական դարձվածը.

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. Կազմել 2-րդ նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).

---

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. 1-ին և 2-րդ նախադասություններից դուրս գրել բաղադրյալ ստորոգյալի 1 օրինակ.

---

### ՄԱՍ III

Կատարել տրված 3 առաջադրանքից վիայն մեկը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.1 Մատենադարանում.../ստեղծագործական երևակայություն/:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.2 Գրել շարադրություն «...Եվ կենդանացան պատկերները» խորագրով՝ բնագրից (Մաս II) օգտագործելով 15 բառ և բառակապակցություն /շարադրության մեջ ընդգծել դրանք/:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.3 Գրել ազատ շարադրություն՝ «Անցյալի էջերը թերթելիս» վերնագրով:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

---

---



